

Ուղևորության ապահովագրության շրջանակներում կատարված ծախսերի փոխհատուցման մեթոմ



Հաճախորդն Ապահովագրական ընկերության հետ կնքել է ուղևորության ապահովագրության պայմանագիր: Արտասահմանում գտնվելու ժամանակ Հաճախորդի մոտ սկսվել է կանացի օրգանների ուժեղ արնահոսություն, ինչի հետևանքով նա տեղափոխվել է հիվանդանոց և ստացել վճարովի դեղորայքային բուժում: Հաճախորդը վստահ էր, որ վերադառնալով Հայաստան, Ապահովագրական ընկերության կողմից անմիջապես կստանա կատարված ծախսերի փոխհատուցումը: Սակայն նա զարմանքով պարզել է, որ Ապահովագրական ընկերությունը մերժում է ծախսերի փոխհատուցումը՝ պատճառաբանելով, որ «ապահովագրական պատահարը կապված է եղել մինչև ապահովագրական ժամկետի սկիզբը առկա հիվանդության հետ»:

Ծանոթ լինելով Ֆինանսական համակարգի հաշտարարի գործունեությանը՝ Հաճախորդը առկա խնդրի մասին անպահաղ տեղեկացրել է Գրասենյակի մասնագետներին՝ խնդրելով պարզել՝ արդյո՞ք խախտվել են իր իրավունքները, թե՛ ոչ:

Հաշտարարը ուսումնասիրել է գործի վերաբերյալ Ընկերության դիրքորոշումը, որը, վկայակոչելով արտասահմանյան բժշկի եզրակացությունը, պնդում է, որ Հաճախորդի մոտ արյունահոսությունը սկսվել է 2 օր առաջ Հայաստանում և դեռ ավելին՝ հիվանդությունը ավելի վաղ պատմություն ունի, և Հաճախորդին նույնիսկ հակացուցված է ճանապարհորդել այդ հիվանդության առկայության պարագայում, ուստի դրա հետ կապված հետևանքները ենթակա չեն փոխհատուցման:

Կատարված քննության արդյունքում պարզվել է, որ Հաճախորդը բժշկական գնություն է անցել ուղևորության մեկնելուց առաջ, չի ունեցել առողջական խնդիրներ, իսկ արնահոսությունը որևէ հիվանդության հետևանք չէ, այլ պարզապես պատահար է: Հաշվի առնելով համապատասխան օրենքները և կատարված հետազոտությունների արդյունքները՝ Հաշտարարը հանգել է այն եզրակացության, որ Ընկերությունը չի ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցառումները՝ ապահովագրական պատահարի մանրամասները պարզելու, ինչպես նաև ապահովագրական պատահարը մինչև ապահովագրական ժամկետի սկիզբը առկա հիվանդության հետ կապելու փաստը հիմնավորելու ուղղությամբ: Ապահովագրական ընկերությունը, հաշվի առնելով Հաշտարարի նկատառումները, ինչպես նաև առավել մանրամասն ուսումնասիրելով գործի հանգամանքները, որոշում է կայացրել բավարարել Հաճախորդի պահանջը: